Մայթերի, պուրակների սալիկապատում՝ 205 քմ

Ճանապարհաշինություն

Իրականացվել է 45.000 քմ բակային տարածքների և 45.000 քմ երկրորդական փողոցների ընթացիկ վերանորոգում, փողոցների, մայթերի, բակերի ասֆալտապատում:

Հուշարձանների հարակից տարածքների բարեկարգում

- Կայարանամերձ հրապարակ՝ Սասունցի Դավթի արձան,
- Խաչիկ Դաշտենցի փող. «Լուսաղբյուր» հուշարձան (կառուցված 1975 թվականին, Արևմտյան Հայաստանի Ռումտիկ գյուղի նահատակների հիշատակին),
- Գաջեգործների և Նուբարաշենի փողոցների հատման մաս՝ հուշարձան նվիրված Հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Կանաչապատում

Նոր ոռոգման ցանցի անցկացում Սարմի փողոցից մինչև Խաղաղ Դոնի փողոցի շրջադարձ, Խաղաղ Դոնի փող. թեք լանջեր և Խաղաղ Դոնի փող. ծաղկաթումբ:

Նոր կանաչ տարածքների ստեղծում՝ Խաղաղ Դոնի փող. ծաղկաթումբ, ծառերի և թփերի բնաբաժակների քաղհան, սիզամարգերի ցանք, սիզամարգերի քաղհան՝ 1.200.000 քմ և այլն:

Բնակֆոնդի պահպանում

Մուտքեր
Վերանորոգվել է բազմաբնակարան շենքերի 45 մուտք՝
Արցախի, Տ. Մեծի, Էրեբունու, Ավանեսովի, Խաղաղ Դոնի, Աթոյան, Նոր Արեշի 15-րդ, 5-րդ, Գաջեգործների, Ռոստովյան պողոտաներում և փողոցներում:

Տանիքների վերանորոգում.
49 բազմաբնակարան շենքերում վերանորոգվել են 6.657 քմ մակերեսով հարթ տանիքներ, 41 բազմաբնակարան շենքերում՝ 2.230 քմ մակերեսով թեք տանիքներ:
1 շենքում (Արցախի պող. հ. 23) իրականացվել են 925 քմ մակերեսով թեք տանիքի հիմնանորոգման աշխատանքներ:

Բակային տարածքների նորոգում, բարեկարգում.

Հիմնանորոգվել և բարեկարգվել է 6 բակ:
Ընթացիկ վերանորոգման աշխատանքներ կատարվել են 19 բակերում:

Մինի ֆուտբոլի դաշտերի տեղադրում՝ 1 դաշտ (Արցախի պող. հ. 8/4 շենքի բակ):
Մանկական և մարզական խաղեր են տեղադրվել 18 բակերում:

Համագործակցություն համատիրությունների հետ

Ջրթափ խողովակների նորոգում՝ 2.580 գծմ

Վերելակների նորոգում
Արագության սահմանափակիչի ճոպանների փոխարինում, հիմնական ճոպանների փոխարինում, անջատիչների փոխարինում, կանչի կոճակների փոխարինում, գլխավոր շարժիչների փոխարինում, հոսանքի պաշտպանիչի տեղադրում, կախովի մալուխի փոխարինում, ավտոմատների փոխարինում, ներդիրների փոխարինում, հրամանի ապարատների փոխարինում, «էտաժնիկների» փոխարինում, վերելակի խցիկի պատերի փոխարինում, հարկային դռների փոխարինում:

Նկարազարդման աշխատանքներ
Բակային տարածքներում կատարվել են 735քմ ընդհանուր մակերեսով նկարազարդման աշխատանքներ:

Համագործակցություն «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Երևան Ջուր», «Երևան գազ» ՓԲԸ-ների հետ

Ջրամատակարարման համակարգի վերանորոգում՝ 2.130գծմ
Այվազովսկու, Երկաթուղայինների փողոցներում:
Կոյուղատար համակարգի վերանորոգում՝ 294գծմ
Աճեմյան փող. 2-րդ նրբանցքում:
Արտաքին լուսավորության ցանցի կառուցում՝ 98 հենասյուն
Նոր Արեշի 32-րդ և 44-րդ փողոցներում,
Մուրացանի, Ռոստովյան և Խաղաղ Դոնի փողոցների
շենքերի բակերում:

Երեբունի վարչական շրջանում 2015 թ. կառուցվել է 4 նոր թեքահարթակ:

Կազմակերպվել է 195 ծնողների այցելություն ԼՂՀ-ում և ՀՀ սահմանամերձ գոտիներում ծառայող ժամկետային զինծառայողների զորամասեր:

Համագործակցություն ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ

Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ վարչական շրջանում բացվել է գթության խոհանոցի արտագնա սպասարկման կենտրոն՝ 60 շահառուների համար:

Վարչական շրջանի տարածքում հայտնաբերված անօթևանները տեղափոխվել են «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի անօթևանների կենտրոն: Սուրբ Զատիկի կապակցությամբ հիմնադրամի շահառուների համար կազմակերպվել է միջոցառում, տրամադրվել է պարենային օգնություն: Թուֆենկյան բարեգործական հիմնադրամի, Կանանց աջակցության կենտրոնի և հայ-շվեդական «Նունյոս» բարեգործական հիմնադրամի, Ամերիկայի «Հայ Ավետարանչական ընկերակցություն», «Նունե Եսայան» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ իրականացվել են տարաբնույթ ծրագրեր: Շահառուներին ցուցաբերվել է աջակցություն, կազմակերպվել են կար ու ձևի, կտորի վրա նկարազարդման և գորգագործության, դիզայնի կարճաժամկետ դասընթացներ, տրվել է հագուստ և սնունդ:

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել են քննարկումներ՝ երեխաների խնամքի ու պաշտպանության կենտրոնացված հաստատություններում գտնվող երեխաների, նրանց ընտանիքների կարիքների գնահատման վերաբերյալ:
Բազմաթիվ միայնակ տարեցներ ընդգրկվել են «Առաքելություն Հայաստան» ԲԿ տնային սպասարկում և խնամք ստացող շահառուների ցանկում: Համագործակցել ենք «Մենք կարող ենք» մտավոր խնդիրներ ունեցող երիտասարդների, երեխաների և նրանց ընտանիքների շահերի պաշտպանության հասարակական կազմակերպության հետ:

Տնային պայմաններում միայնակ տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կենտրոնի շահառուներին տրամադրվել է աջակցություն՝ հանրապետության պատմական վայրեր էքսկուրսիա գնալու նպատակով, կազմակերպվել է հյուրասիրություն: «Առաքելություն Հայաստան» ԲԿ շահառուներին նույնպես ցուցաբերվել է զգալի աջակցություն:

Աջակցություն է ցուցաբերվել ԵԿՄ էրեբունու մասնաճյուղին:
Վարչական շրջանի «Զոհված ազատամարտիկների ընտանիքների միություն» ՀԿ-ին տրամադրվել է դրամական աջակցություն:

Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին

Դրամական օգնություն է տրամադրվել սոցիալապես անապահով բազմաթիվ ընտանիքների: 114 ընտանիքի տրամադրվել է դեղորայք, բազմաթիվ անապահով ընտանիքներ ստացել են հագուստ, սնունդ, կոշիկ, վառելափայտ, վառարան, շինանյութ, հաշմանդամի սայլակ և այլն: Կանանց մեկամսյակի շրջանակում «Զոհված ազատամարտիկների ընտանիքների» 80, «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի 16 կին աշխատակիցներին, «Երևանի մանկավարժ վետերանների ակումբ» հասարակական կազմակերպության 15 կին անդամներին, 1-ին խմբի հաշմանդամ 10 կանանց, ինչպես նաև սոցիալապես անապահով 30 ընտանիքների կանանց վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրվել են նվերներ: «Գթության խոհանոց» բարեգործական ճաշարանի կին շահառուների համար կազմակերպվել է մշակութային միջոցառում, որի ընթացքում շահառուներին վարչական շրջանի ղեկավարի կողմից տրամադրվել են նվերներ: Իրականացվել են անակնկալ այցելություններ էրեբունի վարչական շրջանում բնակվող միայնակ, անժառանգ 20 տարեցների, որոնց տրամադրվել են նվերներ և ծաղիկներ: Մայրության և գեղեցկության տոնի առթիվ սոցիալապես անապահով, բազմազավակ 15 ընտանիքի կանանց տրամադրվել են նվերներ:

Աջակցություն սիրիահայերին. Իրականացվել են սիրիահայ ընտանիքների աջակցության ծրագրեր: Ընտանիքներին տրամադրվել է սնունդ, հագուստ, գույք, դեղորայք:

Աշխատանք վետերանների հետ. Հայոց բանակի կազմավորման 23-րդ տարեդարձի առթիվ հ. 68617 զորամասի Մայրաքաղաքային գնդում կազմակերպվել է տոնական ցերեկույթ, որին մասնակցել են մշակութային հաստատությունների սաները, երգիչ-երգչուհիներ: Կազմակերպվել է հյուրասիրություն: Բանակի կազմավորման և կայացման գործում մեծ ավանդ ներդրած արցախյան պատերազմի վետերաններ վարչական շրջանի ղեկավարի կողմից պարգևատրվել են պատվոգրերով և մասնակցել տոնական ընթրիքի: Հաղթանակի տոնի և Շուշիի ազատագրման տոների առթիվ «Պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի վետերանների խորհրդի» անդամները պարգևատրվել են պատվոգրերով: «Պատերազմի, աշխատանքի և զինված ուժերի վետերանների խորհրդի» անդամներն այցելել են եղբայրական և անհայտ զինվորի գերեզման՝ հարգանքի տուրք մատուցելու, ծաղկեպսակ և ծաղիկներ դնելու, այնուհետև մասնակցել կազմակերպված հյուրասիրությանը:

Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին

2015թ. հունիս-օգոստոս ամիսներին Էրեբունի վարչական շրջանի միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ, սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան 110 դպրոցական 3 հերթափոխով իրենց ամառային արձակուրդի 20-օրյա հանգիստն անցկացրել են Կոտայքի մարզի Մարմարիկի «Հեքիաթայինի կիրճ» մանկական առողջարարական ճամբարում: Երեխաներին տեսակցել է վարչական շրջանի ղեկավարությունը: Ճամբարում հանգստացող երեխաների համար կազմակերպվել են հյուրասիրություններ, միջոցառումներ՝ հեքիաթի հերոսների և ծաղրածուների մասնակցությամբ: Ճամբարին նվիրվել է նաև 2 խաղագորգ՝ յուրաքանչյուրը 35 քմ (ընդհ. 70քմ): «Գիտելիքի օր» միջոցառման շրջանակում վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների 260 դպրոցահասակ երեխաների տրամադրվել է պայուսակներ՝ գրենական պիտույքներով:

ՀՀ սփյուռքի նախարարության կողմից իրականացվող սփյուռքահայ երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագիրը պատշաճ իրականացնելու նպատակով վարչական շրջանից ներկայացվել է 37 հյուրընկալ ընտանիքի հայտ:

2015թ. ընթացքում վարչական շրջանի հ. 71 մանկապարտեզում կատարվել են հիմնանորոգման, հհ. 64, 70, 74, 75 մանկապարտեզներում մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Վարչական շրջանի մանկապարտեզները համալրվել են նոր գույքով՝ խոհանացային սեղաններ, երկհարկանի մահճակալներ, սառնարան, մանկական զգեստապահարաններ: Անվճար հիմունքներով վարչական շրջանի մանկապարտեզներ հաճախող երեխաների ցուցակային թիվն է 2350: 2015թ. վարչական շրջանի մանկապարտեզներում կազմակերպվել և անցկացվել են հիշարժան օրերին, ազգային, եկեղեցական և ծիսական տոներին նվիրված միջոցառումներ: Միջոցառում՝ նվիրված Հայոց բանակի կազմավորման 23-ամյակին, Հայոց լեզվի պահպանման, Տեառնընդառաջ, Վարդանանց և Բարեկենդանի տոներին, Կանանց միջազգային օրվան, Թատրոնի, Անտառի պահպանման միջազգային օրերին, Ծաղկազարդի և Սուրբ Զատկի տոներին, մայիսյան եռատոներին:
Անցկացվել են միջոցառումներ, սպորտլանդիաներ՝ նվիրված երեխաների պաշտպանության միջազգային օրվան:

Մշակույթի ոլորտ

Հիմնանորոգվել է վարչական շրջանի Մ. Մալունցյանի անվան արվեստի դպրոցը: Մ. Մալունցյանի անվան արվեստի դպրոցն ունի 350, Տ. Չուխաջյանի անվան երաժշտական դպրոցը՝ 430, Հ. 3 Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը՝ 720 սան: Կազմակերպվել են մշակութային բազմաթիվ և բազմատեսակ միջոցառումներ: Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին ընդառաջ Էրեբունի վարչական շրջանում կայացավ գրական-երաժշտական երեկո՝ «Կոչեմ ապրողաց» խորագրով, որն ապրելու, պահանջատեր լինելու կոչ էր:

Մշակույթի ոլորտ

Մայիսյան եռատոնի առթիվ վարչական շրջանը մեծ շուքով իրականացրեց տոնական միջոցառում: Հունիսի1-ից օգոստոսի 31-ը մեկնարկեցին Երևանի քաղաքապետի և Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի կողմից նախաձեռնվող ամենամյա ամառային բակային միջոցառումները: Սահմանադրության տոնի առթիվ Էրեբունի վարչական շրջանի Ազատամարտիկների 5-րդ նրբանցքում տեղի ունեցավ շախմատային մեծ մրցաշար, որին իր մասնակցությունն էր բերել շախմատային լեգենդ, գրոսմայստեր Ռաֆայել Վահանյանը, ով մրցում էր Էրեբունցի տաղանդավոր շախմատիստների հետ:

Սպորտի ոլորտ

2015թ. սկզբներին բացվեց Էրեբունու շախմատի մանկապատանեկան մարզադպրոցը: Ներկայումս Երևանի Հ.Խաչատրյանի անվան համալիր մարզադպրոց են հաճախում 313, Էրեբունու շախմատի մանկապատանեկան մարզադպրոց՝ 208 դպրոցականներ:

Հունվարին Էրեբունի վարչական շրջանի հ. 160 դպրոցում անցկացվեց հանրակրթական դպրոցների հավաքական թիմերի միջև ազատ ոճի ըմբշամարտի մրցաշար՝ նվիրված բանակի տոնին:

Փետրվարին Էրեբունի վարչական շրջանում անցկացվել է «Սուրբ Վարդանանց» տոնին նվիրված ըմբշամարտ հանրակրթական դպրոցների միջև: Մարտի 1-ից ապրիլի 5-ը անցկացվել են ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին նվիրված 24-րդ մարզական խաղերը 22 հանրակրթական դպրոցների միջև: Անցկացվել են ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկության 1-6-րդ դասարանների միջև Շուշիի ազատագրման տոնին նվիրված ռազմամարզական խաղեր:

Ապրիլի 25-26-ը անցկացվել է ՀՀ ֆուտբոլի 2015թ. «ՀՖՖ-Կոկա-կոլա» գավաթի մրցաշար, ինչպես նաև՝ Երևան քաղաքի դպրոցականների շախմատի օլիմպիադան: Անցկացվել է ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթը:

Խաղաղ Դոնի 23 շենքի բակը ներկայացվել է ՀՀ նախագահի «Լավագույն մարզական բակ» մրցանակաբաշխությանը: